


ՍԻՐԵԼԻՆԵՐ, ԱՅՍ ԿԻՐԱԿԻ ԾԱՂԿԱԶԱՐԴ Է ՅԻՍՈՒՍ ԵՐՈՒՄԱՐԵՍ ԿԸ ՄՏԼԷ

Յիսուս երեք տարի շարունակ քարոզեց ժողովուրդին, հրաշքներ գործեց եւ աստուածային ոյժը յայտնեց բոլորին: Երբ շատիկը մօտեցաւ, Յիսուս կանչեց իր աշակերտներէն երկուքը եւ ըսաւ անոնց.

- Կ'երթանք դիմացի գիւղը եւ հոն կապուած իշուկ մը կը գտնեք, կ'առնեք կու գաք: Աշակերտները իրենց Տիրոջ հրամանին համաձայն գացին, գտան իշուկը, իրենց հագուստները դրին անոր վրայ ու բերին Յիսուսի: Յիսուս նստաւ եւ ճամբայ ելաւ դէպի Երուսաղէմ:

Երուսաղէմ մուտքին հետզհետէ ամբողջ քաղաքը դիմաւորութեան եկաւ: Ոմանք իրենց հագուստները կը տարածէին ճամբուն վրայ, իսկ ուրիշներ ձիթենիի եւ արմաւենիի ճիւղեր առած կ'աղաղակէին.

- Ովսանա՛ բարձրեալին, օրհնութի՛նս անոր, որ Տիրոջ անունով կու գայ:



Երբ հասան Երուսաղէմ, Յիսուս տաճար մտաւ եւ տեսաւ, թէ իր հօրը տունը վերածած են խաւութի, ուր ամէն տեսակ բան կը ծախէն ուխտաւորներուն: Բարկացաւ, առաւ չուանէ խարազան մը եւ սկսաւ դուրս վտարել բոլոր առեւտուր ընողները, ըսելով.

- Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի, իսկ դուք գայն վերածած էք աւազակներու քարայրի մը: Յիսուսի այս խօսքերը հաճելի չթուեցան հրեայ մեծերուն, որոնք շահ ունէին տաճարին առեւտուրէն: Հետեւաբար մտածեցին, թէ ինչպէս կարելի է ազատիլ Յիսուսէն:

ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՃ՝ ՌԻԹԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻԲՈՒԻԵՆԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒԹ՝ ՌԱՖԻ ԲԵՇԻՇԵԱՆ

ԿԿՈՒ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿ

ԹԻՒ 12

ՄԱՐՏ 7, 2018



Ձեր տօնը շնորհաւոր սիրելի մայրեր

ՄԱՅՐՍ

Յովհաննէս Շիրազ

Մեր յոյսի դուռն է մայրս,
Մեր տան մատուռն է մայրս,
Մեր օրօրոցն է մայրս,
Մեր հերն ու մերն է մայրս,
Մեր ճորտն ու տէրն է մայրս,
Մեր տան անտունն է մայրս,
Մեր արծուաբոյնն է մայրս
Մեր տան ծառան է մայրս,
Մեր տան արքան է մայրս,
Մեր տան անճարն է մայրս
Մեր դէղ ու ճարն է մայրս
Մեր տան աղբիւրն է մայրս
Մեր ծարաւ քոյրն է մայրս
Մեր տան անքունն է մայրս
Մեր անուշ քունն է մայրս
Մեր տան ճրագն է մայրս
Մեր արեգակն է մայրս:
Մայրս մեր հացն է մայրս,
Մեր տան աստուածն է մայրս:


ՉԱԳՈՒԿՆԵՐՍ
ԿԸ ԳԾԵՆ



Գծեց՝ Լանա Հատտատ



Գծեց՝ Արմեն Հատտատ




Գծեց՝ Մարինա Ֆարահ



ԽԱՍՈՂԵՐ

Կրնա՞ս ամբողջացնել թիւերու բուրգը՝ գիտնալով որ իւրաքանչիւր շրջանակի մէջի թիւը հաւասար է անոր տակը գտնուող երկու թիւերուն գումարին: Օրինակի համար՝ $15+6=21$



Կետերը իրարու միացո՛ւր 1-87՝ յայտնաբերելու համար պահուած պատկերը:

Մէկ կետ պարունակող բաժինները սեւ ներկէ յայտնաբերելու համար պահուած պատկերը:

ՄՕՐ ՄԸ ՍԵՐԸ



Հրեշտակ մը երկինքէն երկիր կու գայ պտոյտի համար: Երկրին բո-
լոր կողմերը այցելելէ ետք, կը պատրաստուի արեւամուտին երկինք վե-
րադառնալ: Բայց մեկնելէն առաջ կը խորհի իրեն հետ յիշատակ մը տանիլ
երկրէն երկինք: Պարտեզի ծաղիկներուն կը նայի եւ կը տեսնէ անոնց գեղեցկու-
թիւնը ու կը հիանայ: Հագուագիւտ վարդերու, շուշաններու եւ մեխակներու փունջ
մը կը շինէ, իբրեւ լաւագոյն բանը, զոր կրնար իրեն հետ երկինք տանիլ: Թեւերը
կը բանայ ու կը սկսի թռչիլ: Ծամբուն վրայ կապոյտ աչքերով փոքրիկ տղու մը կը հանդիպի
եւ կը խորհի, թէ այս ալ արժանի է երկինք փոխադրուելու, եւ զայն ալ իրեն հետ կ'առնէ:

Քիչ մը անդին բնակարանի մը առջեւէն անցած ատեն պատուհանէն ներս կը նայի եւ կը տեսնէ
դռնատի մայր մը, որ իր երեխային վրայ ծռած՝ գուրգուրանքով զայն կը փորձէր քնացնել: Հրեշտակը
կը սքանչանայ այդ պատկերին վրայ եւ կ'ըսէ թէ որչա՛փ գեղեցիկ է մօր մը սերը, այն ալ միասին կը տանիմ:

Երկնի դռները: Ներս մտնելէ առաջ՝ անգամ մը իր նուէրներուն կը նայի, եւ ինչ տեսնէ,
ծաղիկները թռումած էին, մանուկը կորսնցուցած էր իր գոյնը եւ գեղեցկութիւնը: Մնացած էր միայն մայրա-
կան սերը՝ ջինջ եւ անաղարտ:

Հետեւաբար՝ կը նետէ ծաղիկները մէկ կողմ, կը վերադարձնէ տղեկը իր ծնողին եւ մայրական սերը միայն
իր կուրծքին սեղմած կը մտնէ հրեշտակներու խումբին մէջ եւ կ'աղա-
ղակէ. «Միակ բանը, որ երկրէն երկինք փոխադրուելու արժանի է, որ չի
կորսնցներ իր գեղեցկութիւնը եւ հրապոյրը, մօր մը սերն է»:




ՏԻՐՈՋ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ՝ ԱՒԱԳ ՇԱԲԱԹ

Վահագին եւ Սեւանին մեծ մայրիկը եկեղեցաւեր եր: Ան կ'ուզէր որ թռռիկներն ալ իրեն պէս հետեւէին եկեղեցւոյ եւ սորվէին Աստուծոյ խօսքերն ու տօնական օրերու նշանակութիւնը: Ան առիթ չէր փախցնէր բացատրելու այդ տօներուն իմաստը:

Կիրակի Ծաղկազարդ է: Ծաղկազարդին պիտի յաջորդէ Աւագ Շաբաթը: Աւագ կը նշանակէ մեծ: Աւագ Շաբաթ կը կոչենք, որովհետեւ այս շաբթուան օրերը Յիսուսին կեանքի ամենայնջատակելի օրերն են: Աւագ Շաբթուան առաջին երեք օրերուն՝ Երկուշաբթի, Երեքշաբթի եւ Չորեքշաբթի՝ եկեղեցւոյ մէջ կը կատարուին յատուկ ժամերգութիւններ: Կը կատարուին Աստուածաշունչէն ընթերցումներ: Կը պատմուի թէ ինչպէս Աստուած ստեղծեց երկիրը, երկինքը, մարդը, թէ ինչպէս Ադամը եւ Եւան անհնազանդ գտնուեցան եւ դրախտէն վտարուեցան, թէ ինչպէս ջրհեղեղէն ետք կեանքը կրկին շարունակուեցաւ եւ ինչպէս Յուդան մատնեց իր ուսուցիչը:

Աւագ Երեքշաբթի յատուկ արարողութեամբ կը կատարուի «Տասը Կուսանաց»ի յիշատակը:



Աւագ Հինգշաբթի

Այդօր Յիսուս իր աշակերտներուն հետ կը կատարէ վերջին ընթրիքը: Եկեղեցւոյ մէջ Պատարագ կը մատուցուի եւ հաւատացեալներուն հաղորդութիւն կը տրուի:

Երեկոյեան կը կատարուի Ոսկւլուայի արարողութիւնը: Ասիկա՝ Տիրոջ աշակերտներուն ոտքերը լուալու յիշատակին է: Մեր եկեղեցւոյ մէջ կը տօնուի այս յիշատակը հետաքրքրական արարողութեամբ: Եպիսկոպոսը կամ քահանան կը լուայ դպիրներուն ոտքերը՝ օրհնուած իւղ եւ ջուր քսելով անոնց վրայ: Կ'երգուին գեղեցիկ շարականներ:

րականներ:

Աւագ Ուրբաթ

Այդօր սուգ է որովհետեւ Յիսուս չարչարուեցաւ, խաչուեցաւ եւ խաչին վրայ իր հոգին աւանդեց: Ան խաչուեցաւ, որ մեզի ցոյց տայ, թէ որքան կը սիրէ մեզ:

Երբ եկեղեցի երթանք, կը տեսնենք Յիսուսի դագաղն ու խաչը ծաղիկներով զարդարուած ու կը տեսնենք թէ ինչպէս ամբողջ ժողովուրդը յարգանքով ու խոնարհելով կ'անցնի անոր առջեւ եւ կը ստանայ օրհնուած բամպակը:

Աւագ Շաբաթ

Այդօր երեկոյեան կը կատարուի Սուրբ Չատիկ Ծրագալոյցը: Կը մատուցուի Ս. Պատարագ: Երեկոյեան կը վերջանայ նաեւ Պահքը, որ սկսած էր եօթը շաբաթ առաջ: Հին սովորութեան համաձայն, պահքը կը լուծուէր ձուկով, հաւկիթով եւ իւղով: Նոյնը կ'ընենք նաեւ հիմա: Աւագ Շաբթուան ընթացքին կը պատմուին նաեւ Յիսուսի առակները: Իսկ Կիրակի օր Չատիկ կը տօնուի:

